

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԸ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ

ՀՀ պաշտպանության նախարարի հրամանի համաձայն այս տարվա հունվարի 8-31-ը Սյունիքում անցկացվում է 2014 թվականի ձմեռային զորակոչ:

Հունվարի 10-ին Կապանում մեկնարկեց ձմեռային զորակոչը: Առաջին հավաքին հայկական բանակ զորակոչվեց 23 երիտասարդ: Երիտասարդներին խաղաղ ծառայություն մաղթեցին մարզային և քաղաքային իշխանությունների ներկայացուցիչները, Հայրենական մեծ պատերազմի վետերանները: Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Արսեն Գրիգորյանը ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի անունից շնորհավորեց նորակոչիկներին և բարի ու անփորձանք ծառայություն մաղթեց նրանց:

Հանդիսության ավարտից հետո նորակոչիկները մեկնեցին կենտրոնական հավաքակայան: